**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

6 մայիսի 2024թ. թիվ 362

Ա.ՊԱՊԱՆՅԱՆԻՆ, Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ ԵՎ
Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ԱԳԱՐԱԿ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Վահրամ Ղարսայանին, ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին և կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Աշոտ Պապանյանին ս/թ մայիսի 7-ին մեկ օրով գործուղել Ագարակ՝ «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովի կազմում կատարված աշխատանքները դիտարկելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

06/05/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. մայիսի 6
ք.Վանաձոր